

**Լինգենսն ընդդեմ Ավստրիայի (Lingens v. Austria), 1986թ., Appl. No. 9815/82,
Մարդու իրավունքների եվրոպական դատարան**

Թեմա՝ զրպարտություն

Ենթաթեմա՝ Հանրային անձինք և մարմիններ, պաշտպանության միջոցներ
Թեսթ՝ Արտահայտվելու ազատության իրավունքի կարևորությունը,
անհրաժեշտությունը

Սանկցիան՝ ֆինանսական

Վճիռը՝ արտահայտվելու ազատության իրավունքի խախտում, միաձայն
Իրավասություն՝ մարդու իրավունքների եվրոպական դատարան, Ավստրիա

Ընդհանուր տեղեկատվություն

Դիմումատուն ենթարկվել է տուգանքի Ավստրիական թերթում տպագրված
հոդվածում քաղաքական գործչին զրպարտելու համար: Ավստրիայի Քրեական
օրենսգրքի 111-րդ հոդված: Եվրոպական դատարանը ճանաչել է ՄԻԵԿ-ի 10-
րդ հոդվածի խախտում:

Գործի հանգամանքները

Դիմումատուն լրագրող և խմբագիր է, որը հրապարակել է երկու հոդվածներ,
որոնցով քննարկել է ավստրիացիների մասնակցությունը Երկրորդ
համաշխարհային պատերազմի ընթացքում իրականացված
չարագործություններին: Այս հոդվածները տպագրվել են խորհրդարանական
ընտրություններից հետո, և ենթադրվում էր, որ պաշտոնից հեռացող
Ավստրիայի կանցլերը պետք է կռալիցիա կազմեր պարոն Պ.-ի կուսակցության
հետ, որպեսզի մնար իշխանության: Այնուամենայնիվ, ընտրություններից
հետո, կապված պարոն Պ.-ի նացիստական անցյալի հետ, նրա ղեկավարած
կուսակցության մասին կատարվեցին որոշ բացահայտումներ: Կանցլերը
պաշտպանում էր Պարոն Պ.-ին և նախահարձակ էր եղել նրան պարսավողի
նկատմամբ, որի գործողությունները նա բնութագրել էր որպես «մաֆիայի
մեթոդներ»: Դիմումատուի հոդվածները խստորեն քննադատել էին պաշտոնից
հեռացող կանցլերին նախկին նացիստներին պաշտպանելու համար՝
օգտագործելով հետևյալ արտահայտությունները՝ «ցածր մակարդակի
անսկզբունքայնություն», «անբարոյական» և «անարժան»՝ իր մոտեցումը
նկարագրելու համար: Կանցլերը այնուհետև գործ էր հարուցել լրագրողի դեմ՝
զրպարտության համար, և Վիեննայի շրջանային դատարանը, տուգանքի էր
ենթարկել դիմումատուին: Վերաքննիչ բողոքի հիման վրա տուգանքի չափը
որոշ չափով նվազեցվել էր:

Եվրոպական դատարանի վերլուծությունն ու եզրակացությունը

Եվրոպական դատարանը գտել է, որ տուգանքի նշանակմամբ միջամտություն է դրսևորվել դիմումատուի արտահայտվելու ազատության իրավունքի նկատմամբ: Միջամտությունը սահմանված էր օրենքով և հետապնդում էր իրավաչափ նպատակ՝ այլոց իրավունքների և հեղինակության պաշտպանությունը: Խնդրո առարկան այն հարցն էր, թե արդյո՞ք միջամտությունը անհրաժեշտ էր «ժողովրդավարական հասարակությունում»:

Եվրոպական դատարանը շեշտել է արտահայտվելու ազատության իրավունքի կարևորությունը. «Արտահայտվելու ազատությունը, երաշխավորված 10-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ, ժողովրդավարական հասարակության էական հիմնասյուններից է եւ նրա առաջնթացի, ինչպես նաեւ յուրաքանչյուր անհատի ինքնադրսևորման հիմնական պայմաններից մեկը: Պայմանով, որ այն համապատասխանում է 2-րդ պարբերության սահմանափակումներին, այս ազատությունը կիրառելի է ոչ միայն այնպիսի «տեղեկությունների» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք բարյացակամորեն կամ անտարբերությամբ են ընդունվում կամ համարվում են անվնաս, այլեւ այնպիսիների, որոնք վրդովեցուցիչ, ցնցող կամ անհանգստացնող են: Դա է բազմակարծության, հանդուրժողականության եւ լայնախոհության թելադրանքը, առանց որի չկա «ժողովրդավարական հասարակություն»»: Այս սկզբունքները առավել են կարևորվում, երբ խոսքը վերաբերում է տպագիր մամուլին: Մինչ տպագիր մամուլը չպետք է գերազանցի այն սահմանները, որոնք նախատեսված են, օրինակ, «այլոց հեղինակության պաշտպանության համար», այն, այնուամենայնիվ, պարտավոր է տեղեկություններ և գաղափարներ տարածել քաղաքական հացերի, ինչպես նաև հանրային շահին վերաբերող այլ հարցերի շուրջ: Տպագիր մամուլը ոչ միայն ունի այդպիսի տեղեկություններ և գաղափարներ տարածելու իրավունք, այլև հասարակությունն իրավունք ունի ստանալու դրանք: Այդ կապակցությամբ, ՄԻԵԴ-ը չի կարող ընդունել Վիեննայի վերաքննիչ դատարանի վճռում արտահայտված այն կարծիքը, որ մամուլի խնդիրը տեղեկատվություն տալն է, իսկ դրա մեկնաբանությունը պետք է թողնվի առաջին հերթին ընթերցողին»:

Մամուլի ազատությունը քաղաքական առաջնորդների գաղափարները և մոտեցումները բացահայտելու և դրանց վերաբերյալ կարծիք կազմելու համար լավագույն հնարավորություն է ընձեռնում:

Առավել ընդհանուր ձևով կարելի է ասել, որ քաղաքական բանավեճի ազատությունը կազմում է ժողովրդավարական հասարակության հայեցակարգի առանցքը, որը կարմիր թելի նման անցնում է ողջ Կոնվենցիայով:

Քննադատության ընդունելի շրջանակները քաղաքական գործիչների նկատմամբ, համապատասխանաբար, ավելի լայն են, քան մասնավոր անձանց նկատմամբ: Ի տարբերություն վերջիններիս՝ քաղաքական գործիչները անխուսափելիորեն և գիտակցաբար բաց են իրենց յուրաքանչյուր խոսքի և արարքի մանրակրկիտ քննարկման համար ինչպես լրագրողների, այնպես էլ լայն հանրության կողմից և, հետևաբար, պետք է դրսևորեն հանդուրժողականության առավել բարձր աստիճան: Անկասկած է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասը հնարավորություն է ընձեռնում պաշտպանելու նաև այլոց հեղինակությունն, այն է՝ բոլոր անձանց հեղինակության պաշտպանություն է նախատեսում, և այս պաշտպանությունը տարածվում է նաև քաղաքական գործիչների վրա, նույնիսկ երբ նրանք չեն գործում որպես մասնավոր անձինք, բայց այս դեպքում նման պաշտպանության պահանջները պետք է կշռադատվեն՝ քաղաքական հարցերի բաց քննարկման շահերից ելնելով:

Դատարանը նշել է, որ դիմումատուն օգտագործել է վիճարկվող արտահայտությունները, որպեսզի քննադատի Կանցլերի՝ որպես քաղաքական գործչի մոտեցումը նախկին նացիստների դիրքորոշման վերաբերյալ ավստրիական հասարակությունում: Դատարանը նաև գտել է, որ այն փաստերը, որոնց վրա դիմումատուն հիմնել էր իր հոդվածները, իր գնահատողական դատողությունները, անվիճարկելի էին, անվիճարկելի էր նաև նրա բարեխղճությունը: Դիմումատուն տուգանքի է ենթարկվել Կանցլերի մոտեցումը նկարագրող սուր բառեր օգտագործելու համար:

Դատարանը շեշտել է, որ տարանջատում պետք է արվի փաստերի և գնահատողական դատողությունների միջև: Եթե փաստերի առկայությունը կարելի է ապացուցել, ապա գնահատողական դատողություններն ապացուցելի չեն:

Հետևաբար, տուգանքի նշանակումը անհրաժեշտ չէր ժողովրդավարական հասարակությունում և հանգեցրել է արտահայտվելու ազատության իրավունքի խախտմանը: